

# Դուք կարող եք քվեարկել անգամ այն դեպքում, եթե չեք կարողանում ստորագրել ձեր անվան տակ Կալիֆոռնիայի Ընտրական օրենսգիրք, § 354.5

---

*Մեպտեմբեր 2014, Հրապ. # 5473.10-Armenian*

## **Կարող եք որևէ նշան դնել**

Նշանի հետ միասին պետք է գրվի նաև տվյալ անձի անուն, ազգանունը:  
Անունը պետք է գրվի 18 տարին լրացած որևէ վկայի ներկայությամբ:

## **Կարող եք օգտագործել ստորագրության կնիք**

Ստորագրության կնիքը կարող է օգտագործվել որպես ստորագրություն,  
եթե 18 տարեկանը լրացած վկան նույնպես ձեռագիր գրում է ձեր  
անունը: Սակայն դուք պետք է (1) առցանց գրանցված լինեք քվեարկելու  
համար, և ձեր ստորագրության կնիքը պետք է հաստատված լինի  
Տրանսպորտային միջոցների գրանցման դեպարտամենտի կողմից և  
փոխանցված լինի Նահանգի պետքարտուղարությանը կամ (2) ձեր  
կնիքն օգտագործած լինեք գրանցման գրավոր հայտարարության մեջ  
դատարանի աշխատակցի ներկայությամբ:

## **Ի՞նչ կարող է լինել ստորագրության կնիքի վրա**

- A. Հաշմանդամություն ունեցող անձի իրական ստորագրությունը:
- B. Հաշմանդամություն ունեցող անձի կողմից ընդունված նշան կամ  
խորհրդանիշ:

- C. Հաշմանդամություն ունեցող անձի ձեռագիր գրված անունը, որը գրվել է մեկ այլ անձի կողմից և ընդունվել է հաշմանդամություն ունեցող անձի կողմից:

### **Ո՞վ կարող է օգտագործել ստորագրության կնիքը**

- A. Հաշմանդամություն ունեցող անձը, ով այդ հաշմանդամության պատճառով ի վիճակի չէ գրել և պահում է ստորագրության կնիք:
- B. Անձը, ով ստորագրության կնիքն օգտագործում է այն անձի ներկայությամբ ու համաձայնությամբ, ում պատկանում է ստորագրության կնիքը:

---

Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.*

[http://www.disabilityrightsca.org/  
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):